
նով, «կանոն գ. երորդ յոյս երկուն» եւ «կանոն եւթն յոյս երկուն» երկուսը միասին մի խորան (պատկ. 17). սիւները իրենց խարխխներով եւ խոյակներով նման նախընթացներին, սիւների բունները զարդարուած են պարանահիւսով կամ ծիածանի գոյների բեկումներով: Նման են նաեւ երկու խորաններուն լիւնետները, վերեւի անկիւններում մի մի վարդեակներով. միայն ձախ կողմինը բոլորակի մէջ ութ ճառագայթներով, միջին տարածութիւնը ութ եռանկիւնու բաժնուած՝ սուր ծայրերով դէպի կեդրոնն ուղղուած մի մի եռատերեւով, իսկ աջ խորանի վարդեակները հիւսկէն բոլորակներէ մէջ ութ ոճաւորուած ճուաձեւներով: Խորաններէ աջ և ձախ լուսանցքներէ կողմից, գերանի վերայ մի մի կողով, լայն բերանով և երկու անգամ գօտեւորած: Ճակատի թռչուններէ պարանոցները ու պոչերը գօտեւորած. սիւներէ կողքերէ մի մի պայմանական ճառագարդ, բուներէ օղակաւորած:



Պատկ. 17

«Կանոն ը. երորդ յոյս երկուն, կանոն թ. երորդ յոյս երկուն» մի խորանով բոլորովին նման «կանոն տասներորդ»ին. միայն առաջինը չունի աջ կողմի կողովը.